ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 23

ք. Երևան «09» փետրվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն,Պատվիրատուն պատվիրակում է Կատարողին, իսկ վերջինս «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրանց կիրառումն ապահովող այլ իրավական ակտերի հիման վրա կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված գործառույթների կատարման համար ստեղծված սպասարկման կենտրոնի գործունեությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1 Կատարողից՝ փոխանցված գումարների վերաբերյալ հաշվետվություն ստանալուց հետո եռօրյա ժամկետում սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված լիազորությունների իրականացման նպատակով, սպասարկման կենտրոնի համար ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունքում բացված հաշվին փոխանցել քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված գործառույթների կատարման համար ստեղծված սպասարկման կենտրոնի հասանելիք ֆինանսական միջոցները:

2.2 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1 պահանջել Կատարողից մինչև սույն պայմանագրի գործողության ավարտը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել սույն պայմանագրի շրջանակներում տրամադրված, սակայն չօգտագործված միջոցները,

2.2.2 պահանջել Կատարողից մինչև սույն պայմանագրի գործողության ավարտը, սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված լիազորությունների իրականացման համար տրամադրված միջոցներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել ոչ նպատակային օգտագործված գումարները,

2.2.3 պահանջել Կատարողից սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված լիազորությունների պատշաճ կատարումը:

2.3 Կատարողը պարտավոր է՝

2.3.1 ապահովել պետության կողմից պատվիրակված լիազորությունների պատշաճ կատարումը,

2.3.2 պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները ծախսել ըստ նշանակության,

2.3.3 մինչև սույն պայմանագրի գործողության ավարտը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել սույն պայմանագրի շրջանակներում տրամադրված, սակայն չօգտագործված միջոցները,

2.3.4 մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը պատվիրատուին ներկայացնել բաժինների կողմից նախորդ ամսում կատարված ծախսերի և պարտավորությունների մասին հաշվետվությունները,

2.3.5 Կատարողը Պատվիրատուի տրամադրած միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքում պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

2.4 Կատարողն իրավունք ունի՝

2.4.1 պահանջել Պատվիրատուից սույն պայմանգրի 1.1 կետով սահմանված լիազորությունների իրականացման համար հատկացնել ֆինանսական միջոցներ՝ սույն պայամանգրի 2.1.1 կետով նախատեսված միջոցների սահմաններում:

3. ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓԸ, ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1 Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների գծով պատվիրակված ծառայությունների դիմաց գումարները տրամադրվում են յուրաքանչյուր տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով «1052. Քաղաքացիական կացության ակտերի գրանցում» ծրագրով նախատեսված միջոցներից:

3.2. Պատվիրատուն պարտավորվում է «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N1 հավելվածի N2 աղյուսակի «1052. Քաղաքացիական կացության ակտերի գրանցում» ծրագրի «11001. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ նախատեսված միջոցները ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 8-ի թիվ 184-Ն

որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան փոխանցել Կատարողին՝ «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշմամբ հաստատված եռամսյակային համամասնություններին համապատասխան, որը կազմում է.

1-ին եռամսյակ՝	399800 դրամ
1-ին կիսամյակ՝	799600 դրամ
ինն ամիս՝	1399300 դրամ
տարեկան՝	1999000 դրամ
Ընդամենը՝	1999000 դրամ

3.3. Սույն պայմանագրով սահմանված կարգով փոխանցվող գումարի չափը կարող է փոփոխվել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարի փոփոխության, ոլորտը կարգավորող իրավական ակտերի փոփոխության դեպքում, ինչպես նաև՝ Պատվիրատուի նախաձեռնությամբ: Այս դեպքում Պատվիրատուն փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո կատարողին է ներկայացնում պայմանագրի փոփոխությունների մասին համաձայնագիր, իսկ վերջինս պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն: Կողմերի ստորագրած համաձայնագիրը սույն Պայմանագրի անբաժանելի մասն է:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրի կողմերը պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունները չկատարելու կամ թերի կատարելու դեպքում պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2 Սույն պայմանագրի կապակցությամբ վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Սույն պայմանագրով կողմերի միջև ծագած պարտավորությունները կողմերի վրա տարածվում են 2024 թվականի հունվարի 1-ից:

6.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

6.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի միջև նոր համաձայնագիր կնքելու միջոցով:

6.4 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝	**Կատարող՝**
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	**Դիլիջանի համայնքապետարան**
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8	**ք. Դիլիջան, Մյասնիկյան 55**
հ/հ 900011194165	**հ/հ 900405051120**
հվհհ 02506264	**ՀՀ ՖՆ գանձապետական բաժանմունք**
	հվհհ 07618909
Գլխավոր քարտուղար՝	**Համայնքի ղեկավար՝**
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ	**Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**